11-12-ՐԴ ԴԱՍԱՐԱՆՆԵՐ

3-միավորանոց առաջադրանքներ

1. Ըստ ժողովրդական ասացվածքի՝ նա հաց ուտելիս առողջ է, աշխատելիս՝ հիվանդ: Ո՞վ է նա:

Ա) ծույլը
Բ) ընկերը
Գ) Փանոսը
Դ) Պողոսը

2. Աղյուսակի մի անկյունից սկսելով և որոշակի օրինաչափությամբ շարժվելով՝ կկարդաս մի շատ «կարևոր» բառ: Ո՞ր տառը պետք է տեղադրել դատարկ վանդակում:

ե	*	ի	հ
ր	ն	ա	ք

Ա) ն
Բ) յ
Գ) ր
Դ) ու

3. Պատասխանի տարբերակներից ո՞րը կամբողջացնի ասացվածքը:

<< Ամեն կարդացող ------------------- չի դառնա: >>

Ա) վարժապետ
Բ) վարչապետ
Գ) վարդապետ
Դ) սպարապետ

4. Պատասխանի տարբերակներից երեքը նույն ընտանիքից են, իսկ մեկը՝ ոչ: Ո՞րն է օտարը:

Ա) քնած
Բ) գրած
Գ) հարված
Դ) ուրախացած

5. Բառաշարքում ո՞րն է ավելորդ.
<< գալարուն, զնգուն, խոսուն, ծաղկուն, ճկուն, փայլուն >>:
Ա) փայլուն
Բ) գալարուն
Գ) ծաղկուն
Դ) խոսուն

Հրապարակումը միայն "Քննական Լաբ"-ի թույլտվությամբ

6. Պատասխանի տարբերակներից ո՞րն ունի և՛ *երկրաչափական մարմին*, և՛ *զորամաս*, և՛ *մարզագործիք*, *որը հրում են* նշանակությունները:

Ա) գլան
Բ) վաշտ
Գ) բուրգ
Դ) գունդ

7. Այդ տառն ավելացնելով ՈՐ բառի սկզբից՝ կստանանք նոր բառ: Նույն տառն ավելացնելով ՈՐ բառի վերջից՝ կստանանք ուրիշ նոր բառ: Ո՞ր տառն է դա:

Ա) լ
Բ) հ
Գ) ն
Դ) ձ

8. Հայերենի կետադրության բոլոր կանոններով գրված տեքստում կետադրական նշանների ո՞ր համադրությունը չի կարող հանդիպել:

Ա) ,-
Բ) -,
Գ)) -
Դ) :-

9. Պատասխանի տարբերակներում բերված դարձվածքներից ո՞րը գոյություն չունի:

Ա) ժամանակ սպանել
Բ) ժամանակ կորցնել
Գ) ժամանակ առևանգել
Դ) ժամանակ խլել

10. Բառաշարքում *ը*-ն քանի՞ անգամ է սխալմամբ երևացել:
Ակընթարթ, որոտըընդոստ, դասընկեր, կորընթարդ, խոչընդոտ, գիրկընդխառն, անըստգյուտ

Ա)1
Բ)2
Գ)3
Դ)4

Վերահրատարակումը միայն "Քոնթեստ Լաբ"-ի թույլտվությամբ

4 միավորանոց առաջադրանքներ

11. Պատասխանի տարբերակների բառերից մեկն ունի և՛ *պարիսպ*, և՛ *շախմատային ոչ-ոքի* իմաստները, ինչպես նաև *շոգ* բառի հոմանիշի գրաշրջումն է (կազմված է նրա բոլոր տառերից): Ո՞րն է այդ բառը:

Ա) որմ
Բ) խանդակ
Գ) պատ
Դ) մատ

12. Առաջադրանքը կատարելիս Աննան նկատեց, որ բառերի արանքում «թաքնվել է» հայկական հեքիաթներից մեկի հերոսը: Գտի՛ր՝ ով է նա:
<< *Ափ, բնակիչ, գարնանաբույր, սառնորակ, երիտասարդ* >>

Ա) Նազար
Բ) Փանոս
Գ) Անահիտ
Դ) Մոխրոտ

13. Պատասխանի տարբերակներից ո՞րը չի համապատասխանում բերված գծապատկերին:

Ա) իրականություն
Բ) հեռատեսություն
Գ) հոգեհարազատ
Դ) համապատասխան

14. Կարենը գրազ եկավ, որ մեկ ժամից, առանց համացանցից օգտվելու, կիմանա հայոց լեզվում *մեղր* և *մեղու* բառերի հայտնվելու պատմությունը, և վազեց գրադարան: Ո՞ր բառարանը պետք է վերցնի Կարենը՝ հարցի պատասխանը վստահաբար գտնելու համար:

Ա) բացատրական
Բ) ուղղագրական
Գ) հայ-ռուսերեն
Դ) ստուգաբանական

Վերահրատարակումը միայն "Քննական Լար"-ի թույլտվությամբ

15. Գտի՛ր բանաստեղծական տողը կարդալու բանալին և նշի՛ր հեղինակին:

Ա) Վահան Տերյան
Բ) Հովհաննես Շիրազ
Գ) Համո Սահյան
Դ) Պարույր Սևակ

Է	Ն	Մ	Ս	Ս	Յ
Մ	Ռ	Ե	Ր	Ի	ՈՒ
Ա	ՈՒ	Ր	Յ	Դ	Չ
Յ	Տ	Տ	Ա	ՈՒ	Ր
Ր	Ա	Ա	Մ	Ռ	Ե
Ս	Մ	Ն	Է	Ն	Մ

16. Բերված նախադասության մեջ քանի՞ բառում ուղղագրական սխալ կա:

Արևի բարք շողերը ոսկեզօծել էին ջրարփի դաշտերը:

Ա) 1
Բ) 4
Գ) 2
Դ) 3

17. Բառաշարքի բոլոր բառերը, բացի մեկից, մի հետաքրքիր աճպարարությամբ կարողանում են կերպարանափոխվել: Ո՞ր բառն է զուրկ այդ հատկությունից:
<< *Ագաթ, լուսաբաց, մասունք, մարզանք, նվազելի, քամի* >>

Ա) քամի
Բ) լուսաբաց
Գ) ագաթ
Դ) մարզանք

18. Ի՞նչ է գաղտնագրվել տառաշարքում:
Քեայբջեեչրեինիսեայբհոմենայբնուըթնուրեայբնուցոզաեչնուքենուէ:

Ա) Քաջերի սահմանը նրանց զենքն է:
Բ) Քիչ խոսիր, շատ լսիր:
Գ) Քանի չես մտածել, մի՛ խոսիր:
Դ) Քեզ ինչ ասում են, այն արա:

Վերահրատարակումը միայն «Քոլեթեսաս Լաբ»-ի թույլտվությամբ

19. << *Գնալ* >>-ը փոխեց իր «ուղղությունը» և դարձավ նոր բառ:
<< *Ձն, ծն, սի, հո, պժ* >> տառախմբերից քանի՞սը կարողացան միանալ այդ նոր բառին:

Ա) երկուսը
Բ) երեքը
Գ) չորսը
Դ) բոլորը

20. Ո՞ր տարբերակի տառերը ճիշտ վերադասավորելով կստանանք հայ նշանավոր տաղերգուներից մեկի անունը:

Ա) նարացում
Բ) կարացինե
Գ) ֆիֆար
Դ) Բովայնա

5 միավորանոց առաջադրանքներ

21. *«Ոսկե ծիրան» <u>քսանմեկերորդ</u> կինոփառատոնի միջազգային մրցույթի շրջանակում ցուցադրվել է <u>տասնմեկ</u> կինոնկար:*
Այլ կերպ ինչպե՞ս կարելի է գրել ընդգծված թվականները:

Ա) XXI և 21, 11-րդ
Բ) XXI և 21-րդ, 11
Գ) 21 և XXI, XI
Դ) XXI-րդ և 21-րդ, 11

22. Գերմանացի մանկագիր Ջեյմս Քրյուսի «Թիմ Թալերը կամ Վաճառված ծիծաղը» գրքում Թիմ անունով տղան, առանց կասկածելու, պայմանագիր է կնքում չար ուժերի ներկայացուցչի հետ: Ի՞նչ անունով է պայմանագիրը ստորագրում այդ ներկայացուցիչը:

Ա) Աթանես
Բ) Անաստաս
Գ) Աստանա
Դ) Անատաս

Վերատպությունը միայն "Քենգուրու Լար"-ի թույլտվությամբ

23. Ո՞ր բառն է թաքցրել մեղվիկը:

բերք, զբոսանք, երբեք, հրաբուխ,

Ա) այբբենարան
Բ) ճեմարան
Գ) լուսաբաց
Դ) խրախճանք

24. Բերված բառազույգերից երեքը փոխադարձաբար «կապված են» մի շատ հետաքրքիր օրինաչափությամբ: Պատասխանի տարբերակներից ո՞րը չի ենթարկվում այդ օրինաչափությանը:

Ա) ծեր-փիղ
Բ) հին-կոր
Գ) տար-բեր
Դ) բառ-սեր

25. Քանի՞ գոյական և քանի՞ բայ է գրված բառաշարքում:
<< *Վարգել, անարգել, լուսարգել, շանթարգել, հարգել, հողմարգել* >>

Ա) 4 և 2
Բ) 1 և 5
Գ) 3 և 3
Դ) 2 և 4

26. Շարքում բառերը կապված են որոշակի օրինաչափությամբ: Ըստ այդ օրինաչափության՝ ո՞րը կլինի հաջորդ բառը:
<< գունազարդ, թեժ, ձվածեղ, նախշ, տաղավար, ------------- >>

Ա) ցնորք
Բ) ուսուցիչ
Գ) փառք
Դ) քաղաք

Վերարտադրությունը միայն "Քենգուրու Լաբ"-ի թույլտվությամբ

27. Ի՞նչ է գաղտնագրվել նկարելուկով:



Ա) Անպայման պանիր գնիր:
Բ) Ամեն բան իր ժամանակն ունի:
Գ) Ամալյան պանիր է սիրում:
Դ) Այս ամենն իր գինն ունի:

28. Ըստ օրինաչափության՝ պատասխանի տարբերակներից ո՞րը կլինի հաջորդ բառը:
<< *Վարդ, դրամ, մանուշակ, կախարդական,* __________________ >>

Ա) նամակագիր
Բ) նվիրական
Գ) նամակատար
Դ) նկատողություն

29. Չինական գրում նշանների եռապատկումը սկզբնապես օգտագործվել է նոր իմաստով բառեր արտահայտելու համար: Օրինակ՝ 石 քար - 磊 քարակույտ, 隹 թռչուն - 雥 թռչունների երամ, 马 ձի - 骉 ձիերի երամակ: Գտեք 森, 众, 飍 հիերոգլիֆների թարգմանությունները, եթե հայտնի է, որ 木-ը ծառ է, 人-ը՝ մարդ, 風-ը՝ քամի:

Ա) տուն, ընտանիք, առագաստ
Բ) անտառ, ամբոխ, փոթորիկ
Գ) ծառուղի, երեխաներ, միջանցիկ քամի
Դ) թուփ, երեխա, անհողմություն

30. Շաբաթվա յոթ օրերը դասավորված են որոշակի օրինաչափությամբ՝ << *երեքշաբթի, երկուշաբթի, կիրակի, հինգշաբթի, շաբաթ, չորեքշաբթի, ուրբաթ* >>: Պարզե՛ք այդ օրինաչափությունը և գտե՛ք նույն օրինաչափությամբ դասավորված 1-7 թվերը:

Ա) 3, 2, 7, 5, 6, 4, 1
Բ) 1, 2, 4, 3, 8, 6, 5
Գ) 2, 1, 7, 5, 6, 3, 1
Դ) 3, 2, 5, 1, 7, 4, 6

Վերահրատարակումը միայն "Քոնֆուցիուս"-ի թույլտվությամբ